ՄԵԼԻՔԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԿԱՌՈՒՅՑ ՏՈՂ ԱՎԱՆՈՒՄ

Մ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

«Խամսայի» մելիքությունների պատմությունը այս կամ այն չափով լուսաբանված է հայ պատմագրության մեջ։ Այդ քաղաքական միավորումը արդյունք էր օսմանցիների դեմ XVIII դարի սկզբին Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում հայ ժողովրդի հերոսական պայքարի, որը, փաստորեն, շահական Պարսկաստանի տիրապետության ներքո հանգեցրեց հայկական ինքնավարության ստեղծման պատմական Արցախի սահմաններում[1]։ Այդ միավորումը գլխավորում էր Դիզակի մելիք Եգանը (Ավանը)՝ XVIII դարի 30-ական թթ. հայ իրականության խոշոր քաղաքական դեմքը[2]։

Դիզակի նոր մելիքական տան հիմնադիրը իր մելիքական իրավունքների հաստատումը ստացավ դեռևս 1724—1725 թթ. պարսկական շահ Թահմասպ II-ից[3]։ Օսմանցիների դեմ Արցախի մելիքների և Իրանի ապագա շահ Նադիրի միասնական մարտերի ընթացքում մելիք Եգանը, առաջնորդելով հայկական զորամիավորումները, իր քաջագործությունների շնորհիվ խանի և բեկլարբեկի տիտղոսի արժանացավ վերջինիս կողմից 1736 թ.[4], ինչպես այդ մասին վկայում է հայկական նոր միավորման կենտրոն հանդիսացած Տող ավանում պահպանված նրա ընդունարանի շքամուտքի արձանագրությունը. «...Զ(6) մոհՀլիս, ազկ քրիսդոնեաց, որ մեկն Թալիշ, մեկն Զարյարթ, մեկն Խաչան, մեկն Վարանդայ, մեկն Քոչեղ, մեկն Տուզաղ, այսդունց խանը պակլարպեկայ տեղ արար ինձ...»[5]։

Այդ քաղաքական միավորման ոչ երկար գոյատևման, ինչպես նաև մելիքների միջև ծագած ներքին գժտությունների դրան հաջորդող ժամանակներում ստեղծվել է որոշակի ճարտարապետական ժառանգություն՝ հիմնականում մելիքների պալատներ և ամրոցներ, ինչպես նաև եկեղեցիներ, կամուրջներ, տոհմական դամբարաններ[6]։

Ներկա հոդվածով մենք համառոտակի կանդրադառնանք Դիզակի մելիքների շինարարական գործունեության առանձին հարցերի և հանգամանորեն՝ Տող ավանում (Ադրբեջանական ՍՍՀ Հադրութի շրջան) Մելիք Եգանի պալատի պահպանված շինությունների ճարտարապետությանը։

Տող ավանը՝ հայտնի դեռևս միջնադարից[7], նշանավոր դարձավ հատկապես XVIII դարի սկզբից, երբ վերածվեց Դիզակի նոր մելիքական տոհմի աթոռանիստի, որի հիմնադիրները՝ Ղուկաս Վարդապետը և նրա որդի Ավանը

---

1 Հ. Փափազյան. Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը.— ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1985, № 5, էջ 78։

2 Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 181։

3 Հ. Փափազյան. նշվ. աշխ., էջ 77։

4 Բաֆֆի. Երկերի ժողովածու. հ. 10, Երևան, 1959, էջ 193—195։

5 Հ. Փափազյան. նշվ. աշխ., էջ 77։

6 Վերջին ժամանակներում Արցախի մելիքական պալատների ուսումնասիրությամբ սիստեմատիկորեն զբաղվում է Ա. Ղուլյանը, որի հրապարակումների շնորհիվ պատկերացում է կազմվում նրանց հորինվածքային և հատակագծային առանձնահատկությունների մասին։

7 Նույն անվան տակ հիշատակվում է Գտչավանքի 1246 թ. մի արձանագրության մեջ որպես վանքապատկան գյուղ (տե՛ս Դիվան հայ վիմագրության (այսուհետև՝ Դիվան). պրակ 5, Արցախ, կազմեց Ս. Դ. Բարխուդարյանը. Երևան, 1982, էջ 181)։

(Եզանը) եկել էին Տաշիր-Զորագետից[8]։ Ահա թե ինչպես է նկարագրում Տողը Առաքել Վարդապետը. «Բերդաքաղաքս անկանի ի ստորոտս միոյն բարձրագոյն լերին... Արցախեան երկրի ի նահանգին Դիզակու։ Բերդաքաղաքս ի հնումն բաղկանայր ի հազար և ի հինգհարիւր տանց, ըստ շնչագրութեան Պարսից արքային։ Ամենեքեան ընտիր վաճառականք, և բազմագանձ հարստութեան ճոխացեալք, ընդ ամենայն երկիրս և ի հեռավոր քաղաքս ի տերութիւնս ցրուեալ և տարակայեալ իւրաքանչիւր ոք ի շահավաճառութեան պարապեալ։ Տունս և բնակութիւնս բազմածախ գանձուք զարդարեալ։ Նաև զթէատրոն՝ կազմ և պատրաստ զորանց պատրաստեալ միշտ և յավէտ ձիրնթաց արագութեամբ խաղային։ Թիւ աղիւսագործ կրպակաց վաճառականաց մինչև ի հազարաւորս հասանէր։ Արևելեան կողմ ամուր պարսպապատ պատուարօք ամրացուցեալ. ընդ նմին թողեալ զերիս մեծամեծ դրունս երկաթակապ կախեալ, բայց մնացեալ կողմանսն ընդ դրութեամբ իւրով փակեալ է թիկնապահ լեառն բարձրաբերձ։ Նաև՝ չորս սագաշեն սրբատաշ կամարակապ կառուցեալ զեկեղեցիս հիմնեալ ի վերայ մասանց սրբոց... Իսկ մինն եկեղեցեացն իսպառ աւերեալ աւերեցավ հիմնայատակ, արատաւորեալ էր ի հին ժամանակի յայլազգաց. մնացեալքն ամբողջք են»[9]։

Նրա աշխատությունից տեղեկանում ենք նաև Տողում վերաբնակեցված Ղուկաս Վարդապետի և նրա որդի Ավանի՝ Դիզակի ապագա մելիքի առաջին շինարարական գործի մասին. «Վասնորոյ շինեցին զմի ամրագոյն կամարաշեն սենեակ առընթեր սրբոյ Յոհաննու եկեղեցոյն վասն ի նմա բնակելոյ Վարդապետին Ղուկասու և այլ ուր որդւոյն Եկանայ»[10]։ Այդ շինության հետքերը այժմ էլ նկատելի են տեղում։ Վերոհիշյալ նկարագրությունը թույլ է տալիս կասկածի տակ առնելու ոմանց տեսակետը այն մասին, որ Ս. Հովհաննես եկեղեցին կառուցել է մելիք Եգանը[11]։ Ինչպես երևում է, այն գոյություն ուներ մինչև նրա գալը։ Եկեղեցու մուտքի բարավորին եղած 1736 թ. արձանագրությունը՝ Մելիք Եգանի կողմից ծածկի վերանորոգման վերաբերյալ[12], հիմնավորում է այս տեսակետը։ Նրա շինարարական գործունեությունը այստեղ ավելի շուտ սահմանափակվել է այս վերանորոգումով։

Տողի մյուս եկեղեցին՝ Ս. Ստեփանոսը, ճարտարապետական, ոճական առանձնահատկություններից և վիմագրական տվյալներից դատելով նույնպես պատկանում է ավելի վաղ ժամանակաշրջանի[13]։ Եթե նկատի ունենանք Առաքել Վարդապետի հաղորդումը մի ավերված եկեղեցու մասին, նույնիսկ չունենալով տվյալներ նրա նկարագրած չորրորդ եկեղեցու և կուսանաց անապատի կառուցման ժամանակների վերաբերյալ, կարող ենք ընդունել, որ մինչև մելիք Եգանի դալը Տողը, ունենալով առնվազն երեք եկեղեցի, խոշոր բնակավայր էր։ Ասվածից հետևում է, որ Տող բերդաքաղաքի պարսպապատերի կառուցումը, որը հայ պատմագրության մեջ վերագրվում է Մելիք Եգանին[14], պետք է ընդունել

---

8 Առաքել Վարդապետ. Դիզակի մելիքությունը (Նյութեր հայ մելիքության մասին). գրակ Ա, Վաղարշապատ, 1913, էջ 12, 13։

9 Նույն տեղում, էջ 7, 8։

10 Նույն տեղում, էջ 13։

11 Սարգիս Ջալալեանց. Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան. մասն Բ, Տրփխիս, 1858, էջ 259։ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 177։ Այնուամենայնիվ Բարխուդարյանցը նշել է, որ այն «շատ հին է» (Արցախ. Բագու, 1895, էջ 75), իսկ Շ. Մկրտչյանն այն թվագրում է մոտավորապես XIII դարով (Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները. Երևան, 1985, էջ 97)։

12 Դիվան, գրակ 5, Երևան, 1982, էջ 177։

13 Եկեղեցին ունի Եգանի որդի մելիք Եսայու կողմից վերանորոգման վերաբերյալ 1747 թ. արձանագրություն (Դիվան, էջ 177)։ Նշված եկեղեցիների մասին տե՛ս Շ. Մկրտչյան. նշվ. աշխ., էջ 94—96։

14 Բաֆֆի. նշվ. աշխ., էջ 178։ Մ. Բարխուդարյանց. նշվ. աշխ., էջ 421։

որոշ վերապահությամբ։ Այժմ չենք կարող որոշակի եզրակացություններ անել պարիսպների մասին, քանի որ նրանք XIX դարի երկրորդ կեսերից գոյություն չունեն[15]։

Մեզ հետաքրքրող շրջանում են վերանորոգվել նաև նշանավոր Գտիշ բերդի պարիսպները։ Բերդը այն նույն լեռան գագաթին է, որի արևելյան լանջին է գտնվում Տողը[16]։

Ամենաընդարձակ շինությունը, որ կիսաքանդ և խիստ աղավաղված տեսքով հասել է մեզ, դա մելիք Օգանի պալատն է, որը գտնվում է Տողի կենտրոնական մասում։ Չափագրությունները և ուսումնասիրությունները, որոնք կատարել ենք 1985 թ. ամռանը, հնարավորություն տվեցին պատկերացում կազմելու պալատի առանձին կառույցների, ինչպես նաև նրանց սկզբնական տեսքի, կորուստների և հետագա հավելումների մասին, որոնք կատարվել են ընդհուպ մինչև XX դարի սկիզբը։



Գծ. 1

Ներկայումս պալատը իր առանձին մասերով մտնում է XIX—XX դդ. սկզբի խիստ կառուցապատման համակարգի մեջ։ Տեղի են ունեցել հին պարսպապատերի մեծ կորուստներ, ինչպես նաև նոր պատերի կառուցումներ, որոնք մասնատել են պալատի նախկին տարածությունը միանգամայն անկապ հատվածների, որոնցից յուրաքանչյուրը ձեռք է բերել առանձին նշանակություն (գծ. 1)։

Պահպանված կառույցներից գրականության մեջ համեմատաբար հայտնի է մելիք Օգանի ընդունարանի շենքը՝ շնորհիվ վերոհիշյալ արձանագրության, որը ծածկում է շքամուտքի ամբողջ մակերեսը։ Շենքը իրենից ներկայացնում է ընդարձակ, թեթևակի շեղված քառանկյուն հատակագծով թաղակապ սենյակ, նույնպես թաղակապ սրահով՝ կից հյուսիս-արևելյան լայնական պատին (գծ. 2, Բ)։ Մուտքը, որ իրականացված է սրբատաշ քարերով շարված ազդեցիկ կամարակապ շքամուտքի տեսքով, բացվում է սրահից և տեղադրված է պատի կենտրոնական մասում։ Դիմացի պատի մեջ տեղադրված է մեծ բուխարի (այժմ քանդված), որի երկու կողմերում բացված են ուղղանկյուն խորշեր։ Սենյակը լուսավորվում է դեպի ներս լայնացող փոքր պատուհաններից թափանցող աղոտ

15 Մ. Բարխուդարյանց. նշվ. աշխ., էջ 77, 78։
16 Նույն տեղում, էջ 421։

լույսով (պատուհաններից մեկը հետագայում լայնացվել է)։ Անպաճույճ ներքին տեսքին որոշ աշխուժություն է հաղորդում սրբատաշ թաղակիր կամարը, որը հենվում է նույնպես սրբատաշ խոյակներ ունեցող որմնասյուների վրա։ Սենյակը ունեցել է ուղղանկյուն բացվածքով երդիկ, որը այժմ փակված է։ Կամարակապ սրահի բացվածքը հետագայում լրացվել է երկու կիսաշրջանաձև կամարներով, որոնք հենվում են պատերին և կենտրոնում տեղադրված սյան վրա։

Նկարագրած շինության տակ գտնվում է նույն չափերի թաղակապ մի նկուղ, որը դրսի հետ կապված է սրահի տակով թեք բարձրացող նեղ թաղածածկ միջանցքով (գծ. 2, Գ)։ Նկուղի մեջ բացվող միակ նեղ ու վերձիգ պատուհանի



Գծ. 2

առկայությունը, ինչպես նաև մուտքի շրջանակի հատուկ կառուցվածքը, որը թույլ է տալիս դուռը տեղադրել միայն դրսի կողմից, ցույց են տալիս, որ տվյալ շինությունը ծառայել է որպես բանտախուց[17]։ Մեր օրերում հարավ-արևելյան պատում բացվածք է արված և նկուղը ծառայում է որպես գոմ։ Շինությունը ամբողջությամբ (բացի վերոհիշյալ սրբատաշ հատվածներից) կոպտատաշ և անմշակ դեղնավուն քարից է։

Ընդունարանի շենքի հարավ-արևմտյան պատը երկու եզրերում ունի շարունակվող պատի հետքեր, որոնք ցույց են տալիս, որ ժամանակին այն հանդիսացել է ընդհանուր պարսպապատի մի հատված (այդ նախկին պատից մի հատված այժմ էլ նկատելի է), այսինքն դիտարկվող շինությունը ներառնված է եղել ինչ-որ պարսպապատ տարածության մեջ։ Այս փաստին մենք կանդրադառնանք ավելի ուշ։

Այժմ ընդունարանի շենքը նկուղով հանդերձ կազմում է բավականին ընդարձակ, եռահարկ, լայն պատշգամբով բնակելի տան առաջին երկու հարկը (գծ. 2, Ա)։ Երրորդ հարկը պետք է վերագրել ավելի ուշ շրջանի։ Դա ակնհայտ է հենց առաջին հայացքից. պատերը երկրորդ հարկի ծածկի մակարդակից շեղումներ ունեն, տարբերվում է նաև շարվածքի բնույթը, ընդունարանի բուխարու ծխնելույզը ծածկված է երրորդ հարկի պատի զանգվածով։

Բացի այդ, վերին հարկը մարմնավորում է հայկական նոր բնակելի տան տիպը, որը տարածում էր գտել XIX դարի երկրորդ կեսից սկսած։ Դրանք գետնի հետ աստիճաններով կապված բարձր և լայն պատշգամբներով, վերջիններ-

17 Նման բնույթի ստորգետնյա շինություններ հայտնի են դեռես միջնադարյան Հայաստանից (տե՛ս Ն. Պ ա պ ո ւ խ յ ա ն. Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 22)։

րիս մեջ բացվող լայն պատուհաններով և մուտքերով (մուտքը պատշգամբից պարտադիր պայման է) շինություններ են։ Կարելի է միայն նշել, որ 1890-ական թթ. սկզբին Մ. Բարխուդարյանցը վկայում է և երրորդ հարկի մասին։ Նկարագրելով մելիք Եգանի երկհարկանի պալատը, նա մեզ արդեն հայտնի արձանագրությունը տեղադրում է գետնահարկի մուտքին[18], որովհետև այն ժամանակ, ինչպես մեր օրերում, հարկերը հաշվում էին նկուղից վեր։

Հետաքրքիր է այն փաստը, որ բոլոր ճանապարհորդները և հետազոտողները նշված կառույցը հիշատակում են որպես «պալատ», սակայն ոչ միայն մուտքի արձանագրության մեջ նշված փաստը նրա ընդունարան լինելու վերաբերյալ, այլև ստորգետնյա հարկի առկայությունը (որպես բանտ) վկայում են շենքի հասարակական բնույթի մասին։ Այդ միտքը հաստատող կարևոր կողմն



Գծ. 3

է նաև այն, որ մուտքը գտնվում է պատի կենտրոնական մասում. մի հանգամանք, որ ընդունված չէ Արցախի բնակելի տների ճարտարապետության մեջ. այստեղ բնակելի սենյակների մուտքերը բացառապես իրականացվում էին պատերի եզրային մասերից։ Մենք կհանդիպենք այս փաստի հետ համակառույցի այլ շինությունների նկարագրման ժամանակ։

Ընդունարանից մոտ 25 մ դեպի հյուսիս գտնվում է կառույցների մյուս խումբը՝ բաղկացած բազմաթիվ շինություններից։ Վերջիններս շրջափակված են արևելյան կողմից մուտք ունեցող բարձր պատերով (գծ. 3, Ա)։ Տվյալ շինությունների խումբը նույնպես կրում է հետագա վերակառուցումների և հավելումների կնիքը։ Համեմատաբար հին կառույցները առանձնացնելիս դժվարությունները կայանում են նրանում, որ հետագա վերաշարերի իրականացման ժամանակ օգտագործվել են հին կառույցներին պատկանող քարեր և այլ տարրեր։ Բայց մանրակրկիտ չափագրությունները, պատերի կարերի ու հանգույցների ուսումնասիրությունը, ինչպես նաև, բարեբախտաբար, գլխավոր շքամուտքի և սենյակներից մեկի պատին պահպանված XVIII դարի երկու թվագիր արձանագրությունները հնարավորություն են ընձեռել պարզելու տվյալ համակառույցի վերջնական կերպարի (իմիջիայլոց, բավականին հետաքրքիր) տարբերային կազմավորման ընթացքը և նրանցից առանձնացնել մելիքների ժամանակաշրջանի շինությունները։

18 Մ. Բարխուդարյանց. նշվ. աշխ., էջ 76։

Ներկայացված առաջին հարկի հատակագծում մելիքական ժամանակաշրջանի շինությունները ընդգծված են մուգ գույնով։ Դա նախ և առաջ թաղակապ դարպասն է՝ դրսի կողմից ավարտված գեղեցիկ կամարակապ շքամուտքով (նկ. 1), որը իրականացված է սրբատաշ քարերով, երևում է, որ նրան հպված պատերը ավելի ուշ շրջանում են շարվել, այսինքն դարպասը ժամանակին ընդգծված է եղել իր ծավալով։ Դարպասի հետ օրգանապես կապված են միայն ղեպի հարավ-արևմուտք գնացող պարսպապատի մի պահպանված հատվածը, ինչպես նաև դեպի հյուսիս ձգվող նրա շարունակությունը մյուս կողմից։ Շքամուտքի աջ կողմում գտնվող 1731 թ. եղծված արձանագրությունը վկայում է, որ դարպասը (կառուցված լինելով, բնականաբար, այդ թվականից ոչ ուշ) հանդիսանում է համալիրի թվագրված կառույցներից վաղագույնը (ընդունարանը, համաձայն մուտքի արձանագրության, կառուցվել է 1737 թ.)։

Նկ. 1

Բակի խորքում տեղադրված լայն բացվածքներով ուղղանկյուն հատակագծով շինության առաջին հարկը, համաձայն ճակատային մասում պահպանված արձանագրության, պատկանում էր ապագա մելիք Առամին՝ Եգանի որդուն, և կառուցվել է ընդունարանի հետ միաժամանակ.

ԲԱՐՈՒՆ ԱՐԱՄԻՆ ԹՎ[ԻՆ] ՌՃՁԶ (1737)[19]։

Հետևապես, այն հանդիսացել է բնակելի կառույց։ Ունի երկու մուտք, բացված ճակատային պատի եզրերում։ Վերջիններից դեպի ձախ, ներսում, լայնական պատի մեջ տեղադրված է ոչ մեծ բուխարի, որը իր ձևավորմամբ կարող է դասվել ուշ միջնադարյան լավագույն բուխարիների շարքը։ Բուխարու և ձախակողմյան մուտքի այսպիսի մոտիկությունը ենթադրել է տալիս, որ վերջինս բացվել է ավելի ուշ շրջանում, հավանաբար այնտեղ գտնվող լուսամուտից։ Հակադիր երկայնական պատին բացված են երեք մեծ կամարակապ խորշեր։ Ավելի փոքր խորշեր տեղադրված են լայնական պատերին։ Սենյակն ունի լայն ծածկ՝ իրականացված փայտե գերաններով։ Լայնական պատերը ունեն դեպի բակը ձգվող որմնաելուստներ, որոնց մեջ բացված բուխարին և խորշերը մտածել են տալիս, որ սենյակը ունեցել է բաց սրահ բակի կողմից (մի երևույթ, որ տարածված էր Արցախի ժողովրդական տներում)։

Բակի հյուսիս-արևելյան կողմում երկու թաղակապ ուղղանկյուն հատակագծով սենյակներ կան։ Միանման այդ շինությունները ունեն սրբատաշ քարերից շարված կամարակապ մուտքեր, որոնք բացվում են նրանց ձախ անկյուններից։ Մուտքերը իրենց ոճական ձևավորումներով հիշեցնում են ընդունարանի շքամուտքը։ Սենյակները լուսավորվում են մեկական նեղ, դեպի ներս լայնացող պատուհաններով՝ նման ընդունարանի լուսամուտներին։ Ակնհայտ է, որ

---

19 Արամը դարձել է Դիզակի մելիքը հոր մահից հետո, 1744 թ. և իշխել է միայն մեկ տարի (տե՛ս Բաֆֆի. նշվ. աշխ., էջ 200—201)։

այս շինությունները նույնպես պատկանում են XVIII դարի սկզբներին։ Մուտքերի հանդիպակաց պատերին գտնվում են բուխարիներ։ Ներքուստ տարբեր մասերում կան փոքր խորշեր։ Թաղերի կենտրոններում եղել են ուղղանկյուն երդիկներ, որոնք այժմ փակված են։

Նկարագրած բոլոր շինությունները պատկանում են մելիքների ժամանակաշրջանին։ XIX դարի վերջում նրանց վրա ավելացվել են բազրիքավոր լայն պատշգամբներով, մեծ լուսամուտներով երկրորդ հարկերը (գծ. 3, Բ)։ Պատշգամբների լայնական պատերում կան բուխարիներ։ Կապը երկրորդ հարկերի հետ իրականացված էր քարե կամ փայտե աստիճաններով (այժմ էլ նրանց մի մասը գոյություն ունի)։

Որոշ հետաքրքրություն է առաջացնում դարպասի և թաղակապ շինությունների միջև գտնվող կառույցը։ Պատերի շարվածքների և կարերի ուսումնասիրությունը վկայում է, որ այս շենքը երևան է եկել ավելի ուշ, ընդ որում, միանգամից կառուցվել է որպես կրկնահարկ շինություն։ Իսկ դա, նկատի ունենալով երկրորդ հարկի ճարտարապետությունը, կարող էր տեղի ունենալ միայն XIX դարի վերջին։ Դրսից դեպի առաջին հարկ տանող կամարակապ մուտքը, ինչպես նաև բակի կողմից անկյան սրբատաշ քարերը անկասկած պատկանել են ավելի վաղ շինությունների[20]։ Առաջին հարկը, միակ նեղ լուսամուտով, սկզբից ևեթ նախատեսվել է որպես գոմ և բակի հետ կապված է պատի մեջ բացված մուտքով։ Ելս մի դուռ գտնվում է արտաքին պատի աջ կողմում։ Երկրորդ հարկը իրենից ներկայացնում է բարձակավոր պատշգամբի մեջ բացվող լայն պատուհաններով և դռներով նեղ սենյակ։ Կապը առաջին հարկի հետ իրականացվում է լայնական պատի առաջակարկառ մասին կից քարե աստիճաններով։ Ելս մի դուռ գտնվում է բակի կողմից։ Ժամանակին այն բացվել է դեպի այստեղ գտնվող պատշգամբը (գծագրի վրա՝ 3, Բ, ցույց է տրված կետագծերով)։ Ներքուստ լայնական պատին տեղադրված են բուխարի և երկու խորշեր։ Ներսի երկայնական պատի մեջ կան ևս երկու մեծ խորշեր։

Դարպասի ծավալի վրա կառուցված է փոքր սենյակ, որի մուտքը բացվում է բարձակավոր պատշգամբի մեջ, որը իր հերթին փայտե աստիճանների միջոցով կապված է վերոհիշյալ արտաքին պատշգամբի հետ։

Ներկայացված ուշ շրջանի բոլոր շինությունների ծածկերը հարթ են և իրականացված են փայտե գերաններով, որոնց վրա տեղադրված են երկթեք թիթեղածածկ տանիքներ (գծ. 4)։

Թաղածածկ կառույցների և «Արամի սենյակի» արանքում գտնվող պատը ժամանակին հանդիսացել է չպահպանված բնակելի տան թիկունքային մասը, այժմ էլ բակը շրջափակող պատերից մեկն է։ Վերջինիս ուղղահայաց պահպանվել են հին, մոտ 1 մ լայնությամբ պարսպապատի հետքերը, որոնք տեսանելի են մինչև 15—16 մետրի սահմաններում, իսկ այնուհետև ծածկվում է հետագա շինություններով (գծ. 3, Ա)։

Այսպիսով, պարզ է դառնում, որ տվյալ շինությունների խմբի վերջնական կերպարը ձևավորվել է համարյա երկու հարյուր տարվա ընթացքում կատարված վերակառուցումներից և հավելումներից։ Այս կապակցությամբ կասկածելի է թվում այն տեսակետը, թե կառույցների միայն հենց այս խումբն է մելիք Եգանի պալատը[21]։ Նրանում մելիքական պալատներին հատուկ որոշ բաժանմունքների բացակայությունը (ինչպես՝ քարակերտ գլխատնային համալիրը,

---

20 Նման տարրեր և հանգույցներ կարելի է գտնել Տողի նաև ուշ շրջանի բնակելի շենքերի պատերում։ Հնարավոր է, որ նշված տարրերը մուտքին կից երբեմնի ախոռի մնացորդները լինեն։

21 Ա. Բ. Ղուլյան. Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքների հորինվածքային առանձնահատկությունները (Հայկական ճարտարապետության պրոբլեմներ, Թ. Թորամանյանի 120-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր. Երևան, 1984, նկ. 1)։

խորշաձև բաժանմունք ունեցող դահլիճը և այլն[22]) հաստատում են մեր տեսակետը այն մասին, որ այդ շինությունը մելիք Եգանի պալատի մի մասը կարող է լինել։ Ինչպես արդեն նշվել է, դարպասից դեպի հարավ-արևմուտք ձգվել է պարսպապատ, որի հիմքի մի հատվածը նկատելի է նաև այժմ։ Հետագայում նրա երկայնքով կառուցվել են Տողի բեկերի երկու տներ, որոնց առաջին հար-



Գծ. 4

կերում նկատելի են ավելի վաղ շրջանի կառույցների առանձին հատվածներ, որոնք անկասկած եղել են պարսպին կից կառույցներ (գծ. 1, Գ)։ Եթե նկատի ունենանք, որ ընդունարանի շենքը նույնպես հարում էր պարսպին, ապա ակնհայտ է դառնում, որ նկարագրված բոլոր հին պահպանված շինությունները ինչ-որ ժամանակ հանդիսացել են պարիսպներով շրջապատված համալիրի մասերը։ Համալիրի հյուսիս-արևելյան մասում հիշատակված պարսպապատի հիմքերը թույլ են տալիս ենթադրելու, որ դեպի հյուսիս նույնպես շարունակվում էին այժմ չպահպանված շինություններ։ Վերջին հաշվով, ուրվագծվում է բավականին ընդարձակ, պարփակ (մելիքների պալատների հորինվածքային լուծումի պարտադիր պայմանը) համալիրի աղոտ պատկերը, որի շինությունների մեծ մասը չի պահպանվել։ Այսպիսի ընդարձակ պատկերը, անշուշտ, ավելի արժանի է թվում իր տիրոջը։ Չպետք է մոռանալ, որ մելիք Եգանը եղել է Արցախի մելիքների խանը և բեկլարբեկը, իսկ նրա հարստության մասին առ այսօր ավանդություններ են պահպանվել, և դժվար թե նրա պալատը զիջեր ուրիշ մելիքների պալատներին, որոնք ներկայացնում են ընդարձակ համալիրներ[23]։

22 Նույն տեղում, էջ 22։
23 Նույն տեղում, նկ. 1։

Սակայն հարկ է նշել, որ պալատի սկզբնական տեսքը հնարավոր է պարզել միայն պեղումների միջոցով։

Մնում է ավելացնել, որ պալատի նշված հատվածները ծառայում են առանձին ընտանիքների, այդ թվում նաև Դիզակի մելիքների սերունդների ներկայացուցիչների բնակությանը։ Շինությունների մի մասն էլ վեր է ածված գոմերի[24]։

МЕЛИКСКИЙ ЖИЛОЙ КОМПЛЕКС В ПОСЕЛКЕ ТОГ

М. А. САРКИСЯН

Резюме

От эпохи арцахских меликов осталось богатое архитектурное наследство. Дворец мелика Егана в Тоге является одной из интересных построек данного периода. Находясь в центральной части поселка, он входит своими отдельными сохранившимися частями в систему более поздней плотной жилой застройки. Утрата большей части прежних сооружений, а также дальнейшие пристройки и надстройки затрудняют изучение дворцового комплекса. Обмеры и исследования, проведенные на месте, позволяют проследить хронологическую последовательность застройки существующего комплекса и выделить сооружения меликского времени, а также представить первоначальный вид дворца.

---

24 Օգտվելով առիթից շնորհակալություն ենք հայտնում Սուրեն Մարգանյանին, ինչպես նաև Տողի դպրոցի աշակերտներին, չափագրությունների ժամանակ մեզ ցույց տված օգնության համար։